ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

(Արձանագրություն № 10, 04.07.2019թ.)

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական խորհրդի ընդլայնված նիստը լսելով և քննարկելով ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ռ. Մակարյանի ներկայացումը կապված կրթական չափորոշիչների փոփոխության, գործող ուսումնական պլաններում մասնակի փոփոխություններ կատարելու, առկա ուսուցման մագիստրատուրայի «Ագրոէկոնոմիկա» մասնագիտության «Ագրարային մենեջմենթ» կրթական ծրագրի և «Ագրոբիզնես» մասնագիտության «Ագրոբիզնես» կրթական ծրագրի ուսումնական պլանների, ինչպես նաև մասնաճյուղերի միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 2019-2020 ուստարվա վարձավճարների հաստատման հարցը:

Ելնելով վերոնշյալից, Գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Հայաստանի ազգային ագրարային համալսարանի կրթական չափորոշիչների փոփոխությունը:
2. Հանձնարարել Ուսումնական գործընթացի կառավարման վարչության պետ Դ. Հայրապետյանին գործող ուսումնական պլաններում կատարել հետևյալ փոփոխությունները.
   2.1 Ուսումնական պլանների բոլոր մասնագիտություններից հանել հաշվարկագրաֆիկական աշխատանքները:
   2.2 Ամբիոնների ծանրաբեռնվածություններից հանել դիպլոմային աշխատանքների (նախագծերի) բոլոր խորհրդատուներին տրվող ժամերը:

2.3 Ուսումնական պլաններից կրճատել կուրսային աշխատանքների (նախագծերի) քանակները:

2.4 Կրճատել մնացած կուրսային աշխատանքների (նախագծերի) ծավալները:

2.5 Հեռակա ուսուցման դեպարտամենտի գործող ուսումնական պլանների բոլոր մասնագիտություններից հանել ստուգողական աշխատանքները:

2.6 Համալսարանի բոլոր մասնագիտություններից՝ սկսած 2-րդ կուրսերից, ուսումնական պրակտիկաները դարձնել արտադրական:

3. Հաստատել առկա ուսուցման մագիստրատուրայի «Ագրոէկոնոմիկա» մասնագիտության «Ագրարային մենեջմենթ» կրթական ծրագրի և «Ագրոբիզնես» մասնագիտության «Ագրոբիզնես» կրթական ծրագրի ուսումնական պլանները:

4. Հաստատել մասնաճյուղերի միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 2019-2020 ուստարվա վարձավճարները:

Գիտ. խորհրդի նախագահ՝ Վ. ՈՒՌՈՒՏՅԱՆ

Գիտ. քարտուղար՝ Դ. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ